ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ չկա այլևս Հովսեփ Օրբելին: Անսպառ էր թվում կենսական ուժի այն պաշարը, որով նրան օժտել էր բնությունը, անսպառ էր թվում նույնիսկ նրա կյանքի վերջին տարիներին, երբ ժամանակը իր անխուսափելի կնիքն էր դրել նրա դեմքի վրա: Բայց առատորեն օժտված,



նա առատորեն էլ ծախսում էր մտավոր իր եռանդը: Մենք տեսել ու պատկերացնում ենք նրան միշտ մտքի ու հույզի բռնկումներով լուսավորված:

Ասում են այդպիսին է եղել Հովսեփ Օրբելին դեռ մանկության ու պատանեկության օրերից, որ նա անց է կացրել Վրաստանում: Մնվել է նա Քութաիսիում 1887 թ. մարտի 20-ին: Միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսի կլասիկ գիմնազիաներից մեկում: 1904 թ. Օրբելին Պետերբուրգի համալսարանի

ուսանող է: Հ. Օրբելու գիտական հետաքրքրությունները, սկսվելով ու փայլուն դրսևորվելով հունա-լատինական բանասիրության բնագավառում, գնալով լայնանում են: 1906 թ. նա մասնակցում է Անիի հանրահռչակ պեղումներին, հաջորդ տարվանից սկսում մասնագիտանալ նաև հայկական, վրացական ու իրանական բանասիրության բնագավառում: Համալսարանի դասախոս ու պեղումների ղեկավար Ն. Մարը, բացի անմիջական գիտելիքներից, ներշնչում է նրան առանցքային այն գաղափարը, որ պատմական նյութը պետք է ուսումնասիրվի բոլոր հնարավոր՝ հնագիտական, գրական, վիմագրական, լեզվական, ազգագրական և այլ ավյալների օգտագործման պայմաններում, այլապես կիսատ ու գիտականորեն անհամոզիչ կմնա նրա ուսումնասիրությունը: Հ. Օրբելու ջանքերը՝ տիրապետելու բոլոր այդ տեսակի ապրյուրներին, հաջողությամբ են պսակվում նրա անվանի ուսուցիչներ Ժերեբյովի, Ռոստովցևի, Սմիրնովի, Բարթոլդի և այլոց ղեկավարությամբ:

1911 թ. նա ավարտում է Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական և արևելյան ֆակուլտետները և թողնվում համալսարանում՝ պրոֆեսորական կոչման պատրաստվելու համար: Սրան զուգահեռ ծավալվում է նրա տրակտիկ գործունեությունը. ավելի ու ավելի կարևոր է դառնում նրա դերը Անիում, ուր նա վարում է տեղական բանգարանը և մերթ ընդ մերթ, Ն. Մարի բացակայության ժամանակ, նրա պատվերով ղեկավարում պեղումների աշխատանքը (1909—1910, 1913): 1909 թ. համալսարանի գործուղմամբ նա վիմագրական նյութեր է ժողովում Ղարաբաղում (պատմական Խաչենում): 1911 թ. ընթացքում (այս անգամ արդեն Գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ)՝ շրջելով Արևմտյան Հայաստանում, հատկապես Մոկսում, ուսումնասիրում է ուրարտական, հայկական, սելջուկյան հուշարձանները, հայերենի ու քրդերենի բարբառները: 1915 թ. նա ուսումնասիրում է Ղրիմի հայկական հուշարձանները: Հ. Օրբելու մասնակցությունը Ռուսական հնագիտական ընկերության կազմակերպած ու Ն. Մարի ղեկավարած 1916 թ. Վանի հնագիտական արշավախմբի աշխատանքներին պսակվում է սենսացիոն հաջողությամբ՝ նա գտնում է ուրարտական թագավոր Սարդուր II-ի տարեգրությունը պարունակող արձանագրությունը՝ ուրարտագիտության գտնարը:

Դեռևս 1912 թվականից Հ. Օրբելին Ռուսական հնագիտական ընկերության անդամ էր, 1914 թվականից հայագիտություն ու քրդագիտություն էր դասախոսում Պետերբուրգի համալսարանում, իսկ 1917 թ. ընտրվեց հայ-վրացական ամբիոնի դոցենտ:

Այդ տարիների ընթացքում նա հրատարակել է երկու տասնյակից ավելի գիտական աշխատություններ, որոնց թվում են Անիի հնությունների թանգարանի կատալոգը՝ օրինակելի մի գործ, Անիի ավերակների ուղեցույցը, այնուհետև կլասիկ բանասիրության հարցերին, հայոց պատմությանը, հնագիտությանը և արվեստին վերաբերող մասնավոր ու ընդհանրացնող մեծարժեք գիտական երկեր:

Հովսեփ Օրբելին մեկը եղավ այն գիտնականներից, որոնք անվերապահորեն ու ամբողջ հոգով ընդունեցին Հոկտեմբերը. նա բառիս բուն իմաստով նետվեց կուլտուրական շինարարության այն պաթոսի ոլորտը, որով համակված էր երիտասարդ Սովետական պետությունը: Արժե թվել նրա այդ շրջանի գործունեության բնագավառներից մի քանիսը 1918—1920 թթ. —Մոսկվայի վերակազմված Լազարյան ճեմարանի պրոֆեսոր, Պետական հնագիտական խորհրդի

անդամ, Ժողկոմխորհի թանգարանային գործերի կոլեգիայի գիտական-խարտուղար, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր, Նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայի (ГАИМК) իսկական անդամ, նույն ակադեմիայի հրատարակչության վարիչ ու նրա հրատարակությունների խմբագիր, նույն ակադեմիայի և Գիտությունների ակադեմիայի ապարանի գործերի կոմիտեի նախագահ, Պետական էրմիտաժի աշխատակից՝ անա այդ բնագավառների ոչ լրիվ ցուցակը: Ով ճանաչում էր Հովսեփ Օրբելուն, վայրկյան անգամ չէր կասկածի, թե այս պաշտոններից ու պարտականություններից զեր որեէ մեկը անվանական բնույթ էր կրում նրա համար, թե նա չէր նվիրվում դրանցից յուրաքանչյուրին իր ամբողջ էությամբ և կամ թե նա, տարված ղեկավարի բարձր դիրքից, խորշում էր սև աշխատանքից: Զգիտեցողների համար կարելի է հիշել, որ նույն այդ տարիներին Օրբելին տիրապետեց անգամ գրաշարական արվեստին, որպեսզի հաստատուն հիմքերի վրա դնի իր իսկ մշակած՝ հայկական վիմագիր արձանագրությունների հրատարակման սկզբունքների իրականացումը: Մենք ունենք մի քանի գրքեր՝ շարված անվանի գիտնականի ձեռքով: Հետո նա սկսեց սովորեցնել այդ արվեստը Ակադեմիայի մի խումբ աշխատակիցների:

Օրբելու կյանքի այս դրվագը շատ բնորոշ է երիտասարդ սովետական ինտելիգենցիայի առաջավոր շերտի համար, սրանց ձեռքերին էին սպասում հրամայական բանակությամբ գործեր՝ կապված ցարական ժամանակի կուլտուրական հիմնարկների վերակառուցման, դեմոկրատացման, սովետականացման անհրաժեշտության հետ:

Օրբելու անունը սկզբից և եթ կապված էր և հետագայում էլ կապված մնաց կուլտուրական շատ հիմնարկների ու օջախների պատմության հետ: Բայց կա դրանց մեջ մեկը, որ հատուկ տեղ է գրավում նրա կյանքում: Դա Պետական էրմիտաժն է, որին նա տվեց իր եռուն կյանքի երեսուն տարուց ավելին: Այստեղ հիմնական խնդիրն էր՝ դարձնել թանգարանը ժողովրդին մատչելի, լայն մասսաների կուլտուրական դաստիարակման օջախ: Դրա հետ մեկտեղ նա մտահոգված էր կազմակերպելու ոչ միայն էքսպոնատների պահպանության, այլև նրանց գիտական ուսումնասիրման գործը: Այս աշխատանքներով զբաղված Օրբելին էրմիտաժում 1920 թ. մինչև 1951 թ. անցել է «զինվորից մինչև ֆելդմարշալի» ուղին: 1926 թվականից էրմիտաժում նա բաժնի վարիչ էր, 1934-ից՝ դիրեկտոր: Էրմիտաժի ղեկավարման գործում մրցում էին նրա գիտական ու կազմակերպչական տաղանդը: Այդ մրցության լավագույն արգասիքն է Արևելքի հոյակապ բաժնի ստեղծումը, որն էականորեն փոխեց էրմիտաժի կերպարանքը, արևմտյան գեղարվեստի հարստագույն հավաքածոյից այն դարձնելով համաշխարհային մշակույթի արժեքների շտեմարան—մի բան, որ ընդհանուր ճանաչում ստացավ իրանագետների համաշխարհային III կոնգրեսի ժամանակ, որ կայացավ 1935 թ. Լենինգրադում Հ. Օրբելու ղեկավարությամբ:

Քրտնաջան աշխատելով էրմիտաժի առօրյայում, Օրբելին վճռական դեր կատարեց նաև նրա նակատագրի հանգուցային կետերում: Այդ դերը վառ դրսևորվեց Հայրենական Մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիներին, երբ նրա ձեռքով իրականացվեց էրմիտաժի հարստությունները պաշարված ու ռմբակոծվող քաղաքից դուրս բերելու և ապա էրմիտաժին իր նախկին փայլը վերադարձնելու աշխատանքը:

Էրմիտաժյան աշխատանքին համընթաց շարունակվում էին նրա գործունեության նաև մյուս ուղեգծերը: 1925—1931 թթ. նա վարում էր Լենինգրադի համալսարանի նախ հայ-վրացական բանասիրության, ապա նաև Արևելքի նյութական կուլտուրայի պատմության ամբիոնների աշխատանքը: 1928—1929 թթ. նա Դաղստանում ուսումնասիրում է Դերբենտի ամրոցը, հավաքում և՛ աղվանական, և՛ պահլավերեն արձանագրությունները, 1929 թ. Հայաստանում զբաղվում է ճարտարապետական հուշարձանների հետազոտմամբ: 1930 թ.՝ Ուրալի տեղական թանգարաններում ուսումնասիրում է սասանյան շրջանի արվեստի իրերը, հրատարակում է մի շարք աշխատություններ:

1935 թ. Հ. Օրբելին ընտրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (թղթակից-անդամ էր դեռ 1924 թ.), 1946-ին՝ Ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ:

Նվիրված լինելով տարբեր հարցերի՝ հայկական ճարտարապետական հուշարձանների, վիմագրական աղբյուրների, իրանական արվեստի ու գրականության խնդիրներին, վրացագիտության պրոբլեմներին, Օրբելին այդ բազմազան խնդիրների հետազոտությունը ընդգրկում էր մի ընդհանուր կուռ կոնցեպցիայով: Նրա պահանջներից մեկն այն էր, որ մշակութային հարցերը հետազոտվեն հասարակության սոցիալական բաժանվածության տեսակետից, նկատի առնելով մշակույթի դասակարգային բնույթը, և առանձնապես հետամուտ լինել տվյալ շրջանի կամ կուլտուրական երևույթի ժողովրդական անումների հայտնաբերմանը: Մյուս պահանջն էլ այն էր, որ հայ ժողովրդի և, ընդհանրապես, յուրաքանչյուր ժողովրդի կյանքն ու մշակույթը ուսումնասիրվի հարևան ժողովուրդների կյանքի ու մշակույթի լայն ֆոնի վրա, հաշվի առնելով տնտեսական ու կուլտուրական զարեղ ու անխուսափելի կապերն ու փոխազդեցությունները՝ կրոնական ու ազգային պատանշներից անկախ: Եվ նրա յուրաքանչյուր աշխատությունը, լինի դա գողտրիկ մի հոդված արաբական արձանագրություններ կրող վրացական մի ջանի մասին, թե գործ՝ նվիրված ժողովրդական մասսաների ինքնագիտակցության արտացոլմանը միջնադարյան առակներում, կամ սասանյան արվեստի ուրվագիծ՝ այդ կոնցեպցիայի արտահայտություններն են, այսինքն՝ ուղղված են ազգային սահմանափակության դեմ և տոգորված են խորին ժողովրդայնությամբ և ինտերնացիոնալիզմով:

Օրբելու համար սրանք սոսկ գիտական մասնակի տեսություններ չեն, այլ՝ աշխարհայացք, բնավորության գծեր: Սա էր գրավականը այն արտակարգ հաջողության ու փայլի, որով նա մասնակցեց Իրանական արվեստի III միջազգային կոնգրեսին և երեք հանաշխարհային գրական կոթողների հոբելյանների տոնակատարությանը՝ Ֆիրդուսու «Շահ-նամեի» (1934), Ռուսթավելու «Վագրենավոր»-ի (1938) և մեր «Սասունցի Դավթի» (1939):

Օրբելին խորն ու ներհուն ծանոթ էր ոչ միայն այդ կոթողներին, այլև, դրանց պատմական ժամանակաշրջանների ոգուն, առանձնահատկություններին ու մանրամասներին, կարողանում էր թափանցել դրանց բուն էության մեջ և պատմել իր տեսածները իր ունկնդիրներին: Հենց նրա՝ ամբիոնի վրա ծառացող պատկառելի ու վեհ կերպարանքը արդեն ընդգծում էր կատարվող իրադարձության կարևորությունը, իսկ հռետորական եզակի արվեստը, որն ի հայտ էր գալիս և՛ ցածր բավշյա տեմբրի առնական ձայնի՝ շշուկից մինչև որոտ հնչման մեջ, և՛ նշանակալից պաուզաներում, և՛ խոսքի ճկունության, կապակցվածության ու տրամաբանության մեջ, տեղ էր հասցնում նրա մտքի ամենա-

բարդ ու նրբին երանգները: Օրբելին հատուկ ձիրք ուներ ամենին հասկանալի լինելու: Պատմում են, որ Հայրենական պատերազմի տարիներին պաշարված Լենինգրադում նրա պատկերավոր ու թևավոր խոսքը իսկապես որ հմայում էր մարտիկներին, բնդ որում հաճախ այն նվիրված էր լինում արվեստի բարդ հարցերին: Նման նյութերին ականատես եղան նաև Կովկասի պաշտպան մարտիկները և մեր ժողովուրդը, երբ, Հ. Օրբելին 1942 թ. Էրմիտաժի Էվակուացման աշխատանքները ավարտելուց հետո եկավ Հայաստան:

Մինչ այդ էլ Օրբելին կապված էր Հայաստանի հետ սերտ կապերով, որոնք ծայր էին առել դեռ Անիի արշավախմբի արշավանքների, Հայաստանում շրջագայությունների, 1936 թ. Անբերդում կատարած պեղումների ժամանակ: 1934 թ. նա ընտրվել է Հայաստանի Կուլտուրայի պատմության ինստիտուտի իսկական անդամ, 1938 թ.՝ ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի նախագահ, արժանացել Հայկական ՍՍՌ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը: Առանձնապես հարազատ դարձավ Օրբելին Հայաստանին «Սասունցի Դավթի» 1000-ամյակի տոնակատարության ժամանակ, ուր նա ոգեշնչող մասնակցություն ուներ կատարվող բոլոր աշխատանքներին:

Երբ 1943 թ., պատերազմի ծանր պայմաններում, Սովետական կառավարությունը, հետևելով գիտության զարգացման հանդեպ իր հոգատար վերաբերմունքի մշտական սկզբունքին, որոշեց Հայաստանում հիմնել Գիտությունների ակադեմիա, Հ. Օրբելին հաստատվեց ակադեմիկոսների առաջին կազմում և ընտրվեց նորաստեղծ ակադեմիայի պրեզիդենտ: Հ. Օրբելու գիտական մեծ փորձը, կազմակերպչական տաղանդն ու եռանդը անգնահատելի նշանակություն ունեցան երիտասարդ ակադեմիայի անդրանիկ քայլափոխերին, ինչպես գիտական կադրերի համախմբման ու նոր կադրերի պատրաստման, այնպես էլ գիտական ճիշտ ուղղության ընտրության գործում: Կազմավորվեց ու ամրացավ այն կորիզը, որը հետագայում փարթամ ծիլեր տվեց: Նշենք, որ այդ տարիներին Օրբելին ղեկավարում էր նաև Ակադեմիայի Պատմության ինստիտուտը:

1945 թ. Հ. Օրբելին, որ մինչ այդ արդեն մի շարք արտասահմանյան գիտական հիմնարկների ու ընկերությունների անդամ էր, ընտրվեց նաև Իրանական ակադեմիայի պատվավոր անդամ:

1946 թ. Նյուրնբերգյան դատավարության ժամանակ, ուր Օրբելին ներկա էր որպես վկա, նա իր մեղադրական ցնցող խոսքով դիմակազերծ արեց ֆաշիստական ռազմական ոճրագործների պարագլուխներին՝ որպես մարդկային կուլտուրայի ոխերիմ թշնամիների:

Այդ ժամանակ Էրմիտաժի վերականգնման գործը պահանջում էր իր գիտական ղեկավարի ամբողջ ուժերն ու եռանդը, և 1947 թ. Օրբելին պետք է հրաժարվեր Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնից: Սակայն նա չէր դադարում սերտ կապեր պահպանել Հայաստանի հետ: Այցելում էր Հայաստան, 1951 թ. օժանդակեց (իր հին բարեկամ և անմենկին ընկերակից, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Կ. Վ. Տրեվերի հետ միասին) Գառնիի հնագիտական պեղումների գործին, օգնելով արշավախմբին իր ծով էրուդիցիայով ու փորձով և հնարավորին չափ մասնակցում էր մեր Ակադեմիայի մի շարք կարևոր ձեռնարկումներին: Լենինգրադում հայրական խնամք էր տանում հայ ուսանողների և ասպիրանտների հանդեպ, ցույց տալով նրանց ամեն տեսակ օգնություն, մերթ ոգևորելով, մերթ կշտամբելով նրանց: Մի քանի ասպի-

ռանտների (հայագիտության ու հրդեհագիտության գծով) գիտական նախապատրաստության գործն էլ ղեկավարում էր ինքը:

Հ. Օրբելու թղթապանակում կուտակվել էին նախորդ տասնամյակներին գրված մի շարք ուսումնասիրություններ, որոնցից են՝ «Աղթամարի ճարտարապետական հուշարձանները և դեկորատիվ քանդակագործությունը» մոնումենտալ գործը, նյութեր Մոկսի հայկական ու հրդեհաբ բարբառների մասին, աշխատություններ «Սասունցի Դավթի» մասին, հայ միջնադարյան առակների մասին և, վերջապես, միջնադարյան վիմագիր արձանագրությունների մի քանի ժողովածուներ (ՀՍՍՌ ԳԱ աշխատակիցներ Ա. Ղանալանյանի և Ս. Բարխուդարյանի գործակցությամբ): Իր կյանքի վերջին տասնամյակում հեղինակը ձեռնամուխ եղավ դրանք տպագրության պատրաստելու գործին և մի երկուսը հրատարակեց, մնացածն էլ սպասում են հրատարակության: Բացի դրանից նա ձեռնարկեց նաև մի շնորհակալ գործ՝ հայ միջնադարյան երեք խոշորագույն պատմագիրների (Եղիշեի, Ղազար Փարպեցու և Թովմա Արծրունու) երկերի ռուսերեն թարգմանությունը:

1956 թ. Օրբելին իր 70-ամյակի կապակցությամբ Սովետական Կառավարության կողմից պարգևատրվեց Լենինի շքանշանով: Դա արդեն Լենինի երկրորդ շքանշանն էր նրա կրծքին: Անցյալում նա պարգևատրվել էր նաև Աշխատանքային Կարմիր Դրոշի երկու շքանշաններով և մի շարք մեդալներով:

Պարտիայի ու կառավարության բարձր գնահատականը ոգևորում էր Հ. Օրբելուն: Նրա տակավին երիտասարդական եռանդը ելք էր փնտրում նաև գիտա-կազմակերպչական գործունեության մեջ: 1955 թ. նա վարում էր Լենինգրադի համալսարանի Արևելյան ֆակուլտետի դեկանի պաշտոնը, հաջորդ տարվանից նաև Մերձավոր ու Միջին Արևելքի պատմության ամբիոնի վարիչ էր: Նույն 1956 թ. մինչև մահը նա ղեկավարում էր Սովետական Միության արևելագիտական երկրորդ խոշոր կենտրոնը՝ ՍՍՌՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքը:

1960 թ. օգոստոսին Մոսկվայում տեղի ունեցած Արևելագետների համաշխարհային XXV կոնգրեսը այն վերջին գիտական իրադարձությունն էր, որին մասնակցեց Հ. Օրբելին, կատարելով կոնգրեսի նախապատրաստման կազմկոմիտեի նախագահի տեղակալի պարտականությունները և վարելով Կովկասագիտության սեկցիայի աշխատանքները:

Այն հազվագյուտ մարդկանցից էր Հովսեփ Օրբելին, որոնց վախճանը կորուստ է կյանքի շատ բնագավառների համար: Օրբելու մանվամբ գիտությունը կորցրեց խորունկ ու յուրատիպ հետազոտողի, գրականությունն ու արվեստը՝ նրբին գիտակի, սովետական հասարակայնությունը՝ մեծ քաղաքացու, կրքոտ գործիչի ու բոցավառ հռետորի, հայ ժողովուրդը՝ ազնիվ ու անձնուրաց իր որդուն:

Հավերժ հիշատակ Հովսեփ Օրբելուն: